

ՏԱՍԵՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Առաքարարարացիք դիմում են ողակի
Тифлис. Редакция «Мелік»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարումին ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններին համար գծարում են
խորանայնիւ րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր երեւոյթ — ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ՆԵՐԵՔԻՆ ԸՆԴԵՐՈՒՄ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, «ПОРЯДОК» լրագրի թղթակցութիւնը, Նամակ Թիֆլիսից: — ՀԵՌԱԿԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գաւթի բէկ:

ՄԻ ՆՈՐ ԵՐԵՒԱՆԹ

Երէկ մենք արտատպեցինք «Մշակի» մէջ Կ. Պօլսի «Մանկունի» էֆքերը՝ լրագրից մի յօդուած թիւրքաց հայերի սահմանադրութեան քանակ և մէկերորդ տարեգարծի տօնելու վրաս:

Առաջին անգամ տեսնում ենք որ Կ. Պօլսի հայոց մամուլը սկսում է քննողական աչքով նայել այն երեւոյթի վրա, որին առաջ պօլսեցի հայը յանցանք էր համարում քննադատել:

«Մանկունի» էֆքերը՝ լրագրի յօդուածը մի խիստ, անխնայ քննադատութիւն է թիւրքաց հայերի սահմանադրութիւնն տալով երազական իրաւունքների, անողորմ քննադատութիւն է Կ. Պօլսի հայերի թեթեամիտ բնաւորութեան:

Գա թողորմին նոր և մեր կարծիքով ուրախալի երեւոյթ է, որովհետեւ ոչինչ առաջագիմութիւն հնարաւոր չէ որ և է հասարակութեան մէջ առանց անձնաքննութեան Բայց դարձեալ յօդուածը ունի մեծ պակասութիւններ. նա հիմնաւոր քննութիւն չէ, նա չէ բացատրում անմիջապէս երեւոյթի պատճառները, այլ մի քաւր ու չէ միայն, աւելի ոչինչ:

Կ. Պօլսի հայ մամուլը անընդունակ է

հասկանալ որ պօլսեցին այն պատճառով անտարբեր է գէպի ազգային գործերը, թեթեամիտ է, ետական է, միմյանի իր անձնական նիւթական շահերի վրա մտածող է, որ նա Հայաստանից կտրված է, նա ոչինչ կապ չունի մայրենի հողի հետ, նա բիւզանդացի է, նա պատկանում է մի բուրժուազական հասարակութեանը, որ Բասթօրի ափերում նստած՝ իր հարստանալու, կամ իր օրական հացի վրա է մտածում... Նրա առօրեայ, կենսական պահանջները համարաչափ չեն հայաստանցի հայի առօրեայ պահանջների հետ, որոնց հետ նա ծանօթ էլ չէ: Նրա լինելը գործն է, օրինակ, իր ծախսով պահել իր հիւանդանոցի մէջ Հայաստանից գաղթած մշակների որո մանուկներին... Մի ուրիշ ազգութեան պատկանող պօլսեցու ինտելեկտները աւելի մօտ են պօլսեցի հային, քան թէ հայաստանցի հայի շահերը:

Քարոզներով փոխել այս կամ այն հասարակական երեւոյթ անհնարին է:

Երկուսից մին՝ կամ պէտք է զրգռել Կ. Պօլսի հայերի շահասիրական զգացմունքը ազգային գործերի վերաբերութեամբ, կամ պէտք է կատարելապէս անտես առնել Կ.

Պօլսի, հայերին իր հոգալու ժամանակ: Բայց այնու ամենայն «Մանկունի» էֆքերը՝ լրագրի յօդուածը մի նոր երեւոյթ է, առաջին քայլ է գէպի արդիւնաւոր ազգային անձնաքննութիւնը:

Մինչև այժմ Կ. Պօլսի մամուլը իր պօլսեցիների բոլոր պակասութիւնները արժանաւորութեան տեղ էր ընդունում, չէր նախատում ոչ նրանց շահասիրութիւնը, ոչ նրանց անշարժութիւնը, ոչ նրանց յանցա-

ւոր անտարբերութիւնը: Նա ամեն բան լաւ էր գտնում: Կ. Պօլսի և հայոց մամուլը կարծում էին որ մեծ գործ էին կատարում, մեծ ծառայութիւն էին անում ազգին և հայրենիքին, երբ միտին հաւաքվելով կուշտ ուտելուց և լաւ խմելուց յետոյ, մի քանի հարկւր անգամ կը կանչէին, «կեցցէ ազգ, կեցցէ սահմանադրութիւն» և յետոյ կը ցրվէին իրանց տները, գոհ իրանց արած յիմարութիւնից:

Գոնէ այժմ թէ քարոզի ձեռք, լսվում են մամուլի մէջ ազնիւ ձայներ, որոնք սկսել են խտուրթնաւոր քննադատել, ամօթի զրօշմով դատաւարակ այն ցնորական, խաբարայական և այլանդակ երեւոյթը, որ անուսկում է թիւրքայի հայոց սահմանադրութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐԻՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մտկութեամբ հրատարակելով «Փարոս» Հայաստանի պատկերազարդ հանդիսի երրորդ տետրակը (մայիս-յունիս) ստացված է թիֆլիսում:

Անցեալ կիրակի օրը կէսօրին պ. Սարգսիսեանց թիֆլիսի հայոց մշտական խմբի մասնակցութեամբ տուեց մանկական ներկայացում: Ներկայացրին Էկեղծ մազերի վերջին Կթաղ-գաթար թատերի լիքն էր մանուկներով: Այս լիքը ենք համարում անգամ նկատել թէ՛ որքան անտալանտութիւն է այդ տեսակ անբարոյական պիէսաների ներկայացման տանել 10—15 տարեկան երեխաներին: Յետոյ ենք, որ գաւառացիք չեն հետևի թիֆլիսի այդ օրինակին:

Խմբագրութեան մէջ ստացած պ. Ա. Քիւրմի-չեանցի «Բուսարանութեան համառօտ կրկնադական դասընթաց» գրքակը, իլլինի ուսանելն:

— Ա՛յ ի խմբում, կարելի է մի արդիւն պատահած լինի:

Նրանք սկսեցին դարձեալ խմել, հանգստանալով այն մտքով, թէ իրանց սպասած մարդիկը եթէ ջրազացի տակն էլ ընկնելու լինեն, ողջ կը դուրս գան:

Իսկ Սաւան դուրս գալով մառանից, որտեղ նստած էին հիւրերը, քարեայ սանդուղքներով բարձրացաւ և մտաւ մի սենեակ, որ կացուցանում էր նրա քնարանը: Այստեղ պառկած էր նրա միակ դասակը՝ փոքրիկ Պետրոսը: Բարակ վերմակը ծածկում էր նրա երեսը, մայրը յետ քաշեց, որ չնշաւութիւնը ազատ լինի: Անեական տաքութիւնից նա քրտնել էր, և կաթիլները մանրիկի ցողի նման պատկէ էին նրա շուշանի գոյն ճակատը և շառագունած, վարդագոյն թշերը: Մայրը խնայարկեցաւ, համբուրեց նրան, այնքան զգուշութեամբ, որ երեխան ոչինչ չը զգաց: Գետնի նստեց անկողնի մօտ և խորին տխրութեամբ նայում էր նրա երեսին: Հետոյ խեղճ կնոջ աչքերը լցվեցան արտասուքով, ըսկսեց խուլ կիրկոյով լաց լինել: Այդ կինը, որ հազարաւորներին սէր էր ծախել և ոչ մէկին չէր սիրել, — սիրում էր իր դասակին, այն վերն և բնական սիրով, որ տուած է մայրերին միայն: Բայց ինչու էր լաց լինում նա:

Բերդի մէջ բնակվում էին յիսունի չափ հայ ընտանիքներ, երբ լուր տարածվեցաւ, թէ Դաւիթ բէկի զօրքերը պիտի պաշարեն բերդը, հայերը կամեցան դուրս գալ այնտեղից: Այսամագ-կուլի խանը, բերդի տէրը, արգելեց, ասելով. «Չեղ պէտք է պահել իմ ձեռքի մէջ, եթէ ձեր հաւատակիցները կը պաշարեն իմ բերդը, այն ժամանակ ձեր զուրկները ուսմանքի փոխարեն թողանալու եղբայր մէջ կը գնեն և կը նստան գէպի»:

Գրքայի թարգմանութիւնն է. Պ. թարգմանողը խնդրում է այն անձանց, որոնք ձեռքի տակ աւելի լաւ և յաջող հայերեն տեղանքներ ունեն, հազարգել իրան, որով իրան միջոց կը արվի ուղղիկ այդ տեղանքները ընդարձակ Բուսարանութեան դատաւարութեան, որի ազգագրութիւնը յանձն է առել թիֆլիսի ազգագրական ընկերութիւնը: Այս կէտի վրա դարձում ենք մեր մասնագէտների ուշադրութիւնը:

ԱՆԿԻՐԱՆԵՐԱՊՈՒՅՑ մեզ գրում են. «Քանի որ առաջ վերադարձան այնտեղ լիջմանից այն երեք պատգամաւորները, որոնք քաղաքի կողմից ընտրված և ուղարկված էին լիջմանին և երեան: Ա) Մամուլաւորութեան արդիւնքը հոհողոր դպրոցին վերադարձնելու: Բ) Բնական դպրոցի բացման մասին դարձեալ յիշեցնելու և խնդրելու: Գ) 5100 րուբլի գինուրականայ կաշարանների համար որոշած հարկից քաղաքը ազատ կացուցանելու համար: Մամուլաւորութեան արդիւնքը քաղաքի ցանկութեան համաձայն հող. իշխանութիւնը արդէն տնօրինել է յօդուած յիշեալ ուսումնարանին: Իսկ մնացեալ երկու կնի՞մ հարցերի վերաբերութեամբ դեռ չէ կարելի մի դրական քանակ, ըստ որում պ. պ. պատգամաւորները իրանց գործողութեանց մասին դեռ ևս չեն տուել հաշիւ կամ բացատրութիւն թաղապետական ժողովի մէջ, որը կայանալու է ամսոյս 7-ին»:

Այս տարի մայիս ամսում եկած է Ալէքսանդրապոլ «Տաւրիկ» ցիլլը և բաւական լաւ խաղեր է տալիս: Զուարճութիւններից զուրկ ժողովուրդը յաճախում է այնտեղ հաճութեամբ: Վերջին յունիսի 3-ին նշանակված խաղը տեղոյս Սահականչեան օրնորդաց դպրոցի օգտին էր:

Անց հաղորդում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻԷՑ, որ մի հարուստ ազգաւոր պարսն չուտով հիմնելու է մի ընկերութիւն Հայաստան անունով, որի նպատակը պէտք է լինի նպատակը Հայաստանի ֆիլիքական, մոլոլիլական և քաղաքական կազմութեան ուսումնասիրութեանը: Նա կը սալ միջոց այն պարսներին, որոնք կը կամենան Հայաստան ճանապարհորդել ցրտական ուսումնասիրութեան համար: Նոյնպէս կը փարձատրի այն բոլոր այնպատկութիւնները, որոնք Հայաստանին աշխարհագրութեան և նախագիտութեան համար և այլ նպատակով դիմած են կիպէրանին:

Թշնամու բանակը: Պարսիկը պահել էր նրանց որպէս պատանդ, եթէ թշնամին նեղէր, պէտք է նրանց վրա թափէր իր վրէժնորութեան թույնը: Այդ պատճառով բոլորը մեծ երկվեղով ըսպատում էին իրանց տարաքիւլի վախճանին: Այդ բոլորից յետոյ շատ հակառակ էր, թէ ինչու էր լաց լինում Սաւան: Գուցէ իր զաւակին ևս այն բազմաթիւ երեխաներից մէկը էր լինելը, որ պիտի մօրթվէին բերդի փողոցների մէջ:

Նրան իր հոգեկան տխրութիւնից դուրս բերեց դուռն ձայնը, որ հազիւ լսելի կերպով բաղինցին: Նա վազեց գէպի դուռը և իսկոյն բաց արեց: Ներս մտան չորս հոգի: Սաւան նրանց տարաւ մտանը, ուր նստած էին առաջին հիւրերը: Նորեկներից մէկը կուզ սափրիչն էր իր կրկնակի սապատներով, միւսը նրա գեղեցկազէմ աշակերտն էր, երրորդը հակառակի հիւան էր, իսկ չորրորդը՝ այն անձանքն ուղաւորը, որ բերդի դրում միացաւ նրանց հետ և իրան խանի ֆէրաշ էր կոչում:

Առաջինները, տեսնելով նորեկներին, սկսեցին չփոթեցնել, խառվելութեան մէջ ընկան: Բայց երբ տարիւրդը մօտենալով առաջ. — «Ողջոյն ձեզ», բոլորը ուրախութեամբ չըջապատեցին և սկսեցին համբուրել նրա աչքը, բացառաւնչելով:

— Առտուած է վրայ, տէր հայր, զօխքի սատանան էլ չէր կարող ճանաչել ձեզ, եթէ գուց ինքներդ ձեզ չը մատնէիք:

Սափրիչը հանձնորդի տէր-Աւետիքն էր, Գաւթի-բէկի ամենաքաջ զօրապետներից մէկը:

— Նստեցէք, տէր հայր, ասեցին նրան. — Խոտրովածը դեռ չէ ստուել, ձեր բաժինը պահել ենք:

— Օրհնեալ լինիք, որդիք, պատասխանեց քահանան, — կը նստան, ի հարկէ, կը նստան Թող առաջ այդ բաները վրայիցս արձակեմ, յետոյ կը

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Ժ.Գ.

Ջելով բերդի մէջ, հայոց թաղի մի անկիւնում, ուղիղ ամրոցի պարսպի մօտ կանգնած էր մի քարաշէն տուն: Այնտեղ իր միակ փոքրիկ որդու հետ բնակվում էր մի այրի կին: Նրա ամուսին այրը ունէր սեպական այգի, որի թթեաների պտուղներից արագ էր քաւում, իսկ խաղողից գինի էր պատրաստում: Նա գինեվաճառ էր և նրա տունը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ գինեատուն: Ամուսնի մեռնելուց յետոյ նրա առեւտուրը շարունակեց կինը: Նա յայտնի էր ամբողջ բերդի մէջ որպէս լաւ արագ քաւող և նրա պատրաստած գինիները ամենաբնական էին իրանց տեսակի մէջ:

Այդ կինը կոչվում էր Սաւան. նրա տարիքը անցել էին եռեսունից, բայց տակուին թարմ էր մնացել և պահպանել էր իր երիտասարդութեան, գեղեցկութիւնը: Սաւան այն վարպետ կնիկներից մէկն էր, որ անդադար ընկնելուց և կանգնելուց յետոյ, նոր ճանաչում են կեանքը, որ գիտեն, թէ այժմ ինչպէս պէտք է վարվել մարդկների հետ: Նա իր յաճախորդների մէջ լաւ ընտրողութիւն անել գիտէր. երբէք թոյլ չէր տալիս, որ իր չը հաւանած գինի կամ արագ զընդները իր տանը նստելին կամ այնտեղ խմին, այլ պարտաւոր էին առնել և դուրս տանել: Դրա համար բակի մեծ դրան մէջ բացված էր

մի դռնակ, որտեղից նա յաճախորդներին փողը և դարակ ամանները ընդունում էր, և արագով կամ զինով լցնելով, ճանապարհ էր գնում:

Երկրի սովորութիւնը արդարացում էր Սաւանի վարմունքը: Սաւան կին էր, բաւական գեղեցիկ կին, նրա տղամարդը մուսած էր և իր տանը օտար մարդիկ ընդունելը անպատշաճ էր նրա համար: Իսկ այդ գինի, ընդհանրապէս, նրա տան ստորերկրեայ մասանում, ուր դրած էին գինու կարանները, ճրագ էր վաւում: Ընդհանրապէս հոգի նստած էին այնտեղ խմում էին: Նրանց առջև դրած էր հաց և տաք խորովածը ինքը Սաւան շամիւրներով ներս էր բերում և բաժանում էր ընթրողներին: Արդեօք նրա ճառանքը տանը չէին, թէ տանտիրուհին ցանկանում էր, որ իր հիւրերին ոչ ոք չը տեսնէ, և այդ պատճառով ինքն էր յանձն առել ծառայութիւնը: — Երբեք չէ: Միայն նա մի առանձին յարգանքով էր վերաբերվում գէպի իր հիւրերը, որոնց թէ գէմբերը և թէ հագուստը բաւական կատարածութեամբ արտայայտութիւն ունէին:

— Կէս գինիից անցաւ, ասաց հիւրերից մէկը:

— Գեո ոչինչ ձայն չը կաց:

— Եթէ մի ձայն լինէր, իմ չունը առաջինը կը լինէր, որ խաբարը մեզ կը տար, պատասխանեց տանտիրուհին: — Կուք ձեր քէֆին կացէք, ես իսկոյն կը բաց անեմ, երբ դուռն թխկոցը կը լսեմ: Նա դուրս գնաց: Երբեք էր, այդ մարդիկը անհամբերութեամբ սպասում էին ուրիշներին, որոնց ուշանալը նրանց անհանգստութիւն էր պատճառում: Մէկը ասաց.

— Չի լինի թէ մի վտանգի պատահած լինեն:

— Նրանց եթէ ջրազացի տակն էլ զցես, ողջ կը դուրս գան, պատասխանեց միւսը:

— Ապա ինչու այդքան ուշացան:

